**Հավելված 1Է**
**Ծրագրային ամփոփ հաշվետվություն**

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի

Տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Հովհաննիսյանին

Հաստատություն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ

Դրամաշնորհային ծրագրի անվանում՝ «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն»

Դրամաշնորհային ծրագրի
իրականացման ժամանակաշրջան՝ 01.08.2019թ.- 20.03.2022թ.
Դրամաշնորհային պայմանագրի համար՝ № 18/19-CIF

| N | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողություններ | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողությունների իրականացմանն ուղղված քայլեր | Դրամաշնորհային ծրագրի արդյունքներ | Դրամաշնորհային ծրագրի արդյունքների տարածման և շարունակականության ապահովման ուղղությամբ նախատեսվող գործողություններ |
|---|---|---|---|---|
| 1. | Բուհում ստեղծված Անասնաբուժական սիմուլյացիոն կրթական բաժին | «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ՀԱԱՀ-ի 6-րդ մասնաշենքում տրամադրվել է համապատասխան տարածք: Ծրագրի իրականացման ընթացքում վերանորոգվել են ծրագրին տարմադրված 5 սենյակները: Վերանորոգված սենյակները կահավորվել են համապատասխան | Վերանորոգված, ժամանակակից սիմուլյացիոն սարքերով և գործիքներով հագեցած լսարաններ: Համագործակցության ծրագրեր կենդանիների սերմնավորման ժամանակակից մոտեցումների մասին ուսանողների և դասախոսների համար: Վերապատրաստման դասեր դասախոսների համար՝ նոր վարժասարքերը օգտագործելու | Դասախոսների, ուսանողների, գործող անասնաբույժների և առաջադեմ ֆերմերների շրջանում տեղեկատվության տարածում, նոր շահակիցների ներգրավվում ուսումնական պրոցեսին՝ դասախոսների վերապատրաստում, թեմատիկ դասերի վարում, վարպետաց դասերի, վերապատրաստումների անցկացում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրենց գործառույթների՝ սիմուլյացիոն սենյակները լսարանային կահույքով, համակարգչային տեխնիկայով, վարժասարքերով, գործիքներով: Ձեռք է բերվել մասնագիտական գրականություն: Սենյակները գործարկվել են ծրագրի ընթացքում՝ պատրաստ լինելուն պես: | հմտություններ ձեռք բերելու նպատակով: | |
| 2. | Անասնաբուժական ժամանակակից կլինիկա՝ հագեցած համապատասխան սարքերով ու գործիքներով և այլ օժանդակ նյութերով | Ծրագրին տրամադրված 5 սենյակներից 2-ը կլինիկայի աշխատանքների համար նախատեսված սենյակներ են: Սենյակները վերանորոգվել են կլինիկաներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Ձեռք է բերվել հատուկ կահավորում՝ վիրահատական սեղաններ, կցասեղաններ, լաբորատոր սեղաններ և աթոռներ, մետաղական պահարաններ: Կլինիկայի աշխատանքների համար ձեռք են բերվել SS սարքավորումներ՝ դյուրակիր և ստացիոնար համակարգիչներ, պրոյեկտոր, տպիչ: Ձեռք են բերվել լաբորատոր սարքեր՝ մանրադիտակ, ցենտրիֆուգ, անասնաբուժական սարքավորումներ՝ ավտոկլավ, չորացման պահարան, վիրաբուժական լամպեր, ուլտրաձայնային սարք, էլեկտրավիրահատման սարք, նեգատոսկոպ, սառնարանային սարքավորումներ, կշեռք կենդանիների համար: Ձեռք են բերվել անասնաբուժական գործիքներ՝ վիրահատական և | Վերանորոգված, ժամանակակից սարքերով և գործիքներով հագեցած անասնաբուժական կլինիկա և վիրահատարան: Վիրաբուժության դասերի արդյունավետ անցկացում վիրահատարանում: | Իրականացնել կլինիկայի ամբողջական գործարկում և ազգաբնակչությանը ծառայություններ մատուցելու շնորհիվ ապահովել կլինիկան անհրաժեշտ պարագաներով և նյութերով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հերձման հավաքածուներ, ստետոսկոպ, օքսիպուլսիմետր, օտասկոպ, վիրաբուժական թելեր, ասեղներ և այլն, միանգամյա օգտագործման պարագաներ, ախտահանիչներ և դեղորայք: | | |
| 3. | Անասնաբույժների, ֆերմերների, ոլորտի այլ մասնագետների վերապատրաստումների և որակավորումների բարձրացման համար նախատեսված դասընթացների կազմակերպման և անցկացման անհրաժեշտ պայմաններ | Համալսարանը մի շարք կազմակերպությունների հետ կնքել է համագործակցության պայմանագրեր և իրականացնում է մի շարք վերապատրաստման համատեղ ծրագրեր: «Կենդանիների պատվաստող» ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջև կնքված եռակողմ պայմանագրի շրջանակներում: Պայմանագրով նախատեսվում է «Կենդանիների պատվաստող» մասնագետի ուսուցանում՝ կարճաժամկետ դասընթացի միջոցով: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ: «Սմարթ Ագրո» ՍՊԸ-ի հետ գերազանցության կենտրոնում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ծննդագիտության դասախոսների համար, ինչպես նաև ԽԵԿ արհեստական սերմնավորման | Համագործակցության պայմանագրեր մի շարք կազմակերպությունների հետ: Ուսուցանված և վերապատրաստված ֆերմերներ և անասնաբույժներ, կենդանիների պատվաստող մասնագետներ: 7 կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների մոդուլային ծրագրեր | Իրականացնել վերապատրաստումների նոր ծրագրերի մշակում, նոր շահակիցների ներգրավում, ուսուցանել և վերապատրաստել ֆերմերների և անասնաբույժների: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վերապատրաստման դասընթացներ Տավուշի մարզի Թումանյանի տարածաշրջանի ֆերմերների և գործող անասնաբույժների համար: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ: | | |
| 4. | Աշխատաշուկայի ներկայիս պահանջներին համապատասխան գիտելիքներով և կարողություններով օժտված շրջանավարտներ | ՀԱԱՀ-ում «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի» հիմնման հիմնական նպատակներից էր այսօրվա աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կարողություններով և հմտություններով շրջանավարտների մուտքն աշխատաշուկա ապահովելն: Քանի որ ծրագրի իրականացման ընթացքում COVID19-ով, այնուհետև նաև պատերազմով պայմանավորված, խնդիրներ առաջացան ծրագրով նախատեսված գնումների գործընթացների կազմակերպման և իրականացման հետ, հետևաբար կենտրոնը սկսվեց գործարկվել ավելի ուշ, քան նախատեսված էր ծրագրի իրականացման պլանով, ուստի ՀԱԱՀ-ում ստեղծված «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնում» իրենց կրթական գործընթացն են անցկացրել մոտ 50 ուսանող: ՀԱԱՀ-ի կողմից շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակ իրականացվել է զանգվածային հարցում, համաձայն որի հարցված 64 շրջանավարտից | Աշխատաշուկայի ներկայիս պահանջներին համապատասխան գիտելիքներով և կարողություններով օժտված 50 շրջանավարտ: | Շարունակել հետևել աշխատաշուկայի պահանջներին և համապատասխան գիտելիքներով և կարողություններով օժտված շրջանավարտներ թողարկել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 29-ը աշխատում են մասնագիտությամբ և 20-21թթ հարցված շրջանավարտների կեսից ավելին է աշխատում մասնագիտությամբ, իսկ 19-20թթ՝ մոտ 30%: | | |
| 5. | Կազմակերպված վարպետաց դասեր | Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար կազմակերպվել են մի շարք վարպետաց դասեր՝ կովերի արհեստական սերմնավորում և խոզերի արհեստական սերմնավորում թեմաներով: Կազմակերպվել են հանդիպումներ անասնաբույժ Վահե Մկրտչյանի, ֆերմերից-ֆերմերին ծրագրի շրջանականերում Հայաստանում գտնվող մեղվաբուծության Ամերիկացի Փորձագետ Սքոթ Սթենլի, «ՏԱՇԻՐ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՓԲԸ տնօրեն Լևոն Հակոբյանի, ՍԱՏՄ պետ Գեորգի Ավետիսյանի, Հայաստանի Ձիասպորտի Ֆեդերացիայի փոխնախագահ Արմեն Աղաջանյանի և Երևան քաղաքի Ձիասպորտի Ֆեդերացիայի նախագահ Քրիստինա Ներգովայի և այլոց հետ: 2 հանդիպում է կազմակերպվել ԱԳԶԿ հիմնադրամի հետ կենդանիների հաշվառման և համարակալման ծրագրի վերաբերյալ: | Կազմակերպված 12 ից ավել վարպետաց դասեր և հանդիպումներ | Դասախոսներին և ուսանողներին հետաքրքրող և անասնաբուժության մեջ արդի թեմաներով հանդիպումների և վարպետաց դասերի կազմակերպում |
| 6. | Դիմորդների քանակի ավելացում | ՀԱԱՀ յուրաքանչյուր տարի մասնակցում է Կրթություն Եվ Կարիերա EXPO -ներին, ներկայացնելով համալսարանի մասնագիտությունները: | 2020թ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ ընդունված 11 բակալավր և 27 մագիստրանտ, 1 ասպիրանտ | Մասնագիտությունը ավելի գրավիչ դարձնել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ցուցադրության համար օգտագործվել են կենտրոնի համար ձեռք բերված մուլյաժները՝ մասնագիտությունը ավելի գրավիչ ցույց տալու համար: Ֆակուլտետի դասախոսների կողմից կազմակերպվում են այցելություններ հանրապետության միջնակարգ և ավագ դպրոցներ՝ ներկայացնելու մասնագիտությունը: 2022 թվականին համալսարանի ֆակուլտետների մեջ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետը դիմորդների քանակով 2-րդ տեղում է: | 2021թ՝ 10 բակալավր և 25 մագիստրանտ, 2 ասպիրանտ | |
| 7. | Նորաստեղծ Գերազանցության կենտրոնի աշխատանքային գործունեության մշակված նորմատիվաիրավական փաստաթղթեր | Մշակվել են ԱԿԳԿ-ի կառուցվածքի, գործունեության և անվտանգության նորմերի վերաբերյալ նորմատիվաիրավական փաստաթղթեր՝ գործողությունների ստանդարտ ընթացակարգեր և մատյաններ, մասնավորապես՝ Արհեստական սերմնավորման սենյակից օգտվելու ընթացակարգ, Վիրահատարանից օգտվելու ընթացակարգ, Տեխնիկական սենյակից օգտվելու ընթացակարգ, Մուլյաժների լսարանից օգտվելու ընթացակարգ, Կլինիկայից օգտվելու ընթացակարգ, Թափոնների հեռացման և վնասազերծման ընթացակարգ, ավտոկլավի շահագործման ընթացակարգ, Բակտերիցիդ լամպերի աշխատանքի գրանցամատյան և այլն: | Ծրագրի ընթացքում համապատասխան մասնագետների կողմից մշակված միջազգային նորմերին համապատասխան նորմատիվաիրավական փաստաթղթերիփաթեթներ | |
| 8. | Մշակված և տպագրված Համապատասխան մեթոդական, | Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի | Մշակած և հաստատված 9 նոր ուսումնական պլաններ | Շարունակել մշակել նոր ուսումնամեթոդական ձեռնարկներ և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասնագիտական ձեռնարկներ և անհրաժեշտ այլ ուսումնական միջոցներ | դասախոսների կողմից մշակվել են «Ախտածին նախակենդանիների հայտնաբերման լաբորատոր մեթոդներ», «Բրուցելոզի ախտորոշումը, կանխարգելումը և պայքարի միջոցառումները» և «Կենդանիների նյարդային համակարգի հետազոտման եղանակները և հիվանդությունների ախտորոշումը» թեմայով լաբորատոր պարապմունքներ անցկացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներ: 2019թ. Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի գիտխորհրդով, ապա նաև Համալսարանի գիտխորհրդի կողմից հաստատվել են նոր ուսումնական պլաններ՝ «Անասնաբուժության բակալավր», իսկ 2020թ.՝ «Անասնաբուժության մագիստրոս» և «Անասնաբուժության ասպիրանտ» կրթական ծրագրերով:<br>Մշակվել են կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ «Հայաստանում տարածված ձկների հիվանդություններ», «Խոզերի արհեստական սերմնավորում», «Կաթնային կովերի առողջություն», «Կենդանիների որոշ ինվազիոն հիվանդությունների ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը», «ԽԵԿ արհեստական սերմնավորում», «Անասնաբուժական դեղագիտություն» թեմաներով: | Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի մասնագիտությունների համար՝ 3 բակալավր, 4 մագիստրատուրա, 2 ասպիրանտուրա: Մշակված 3 նոր մեթոդական ցուցումներ և 7 կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ: | վերապատրաստման ծրագրեր: |
| 9. | Առցանց միջավայրում ակտիվ ներկայացվածություն (ԱԿԳԿ-ի կայք, սոցիալական էջեր և այլն) | Ծրագրի իրականացման արդյունավետ նախապայման է շահառուների շրջանում իրազեկվածության բարձրացումը և | Նյութեր բուհի պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, տեղեկատվական բուկլետ, տեղեկացված շահակիցներ: | Շարունակել լուսաբանել կենտրոնի գործունեությունը հնարավոր բոլոր հարթակներում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նրանց ներգրավումը իրականացվող բարեփոխումներին: ՀԱԱՀ պաշտոնական կայքէջում մշակվել է «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի ենթաէջը, որն ունի Մեր մասին, Ուսուցում, Գրադարան բաժինները և տալիս է տեղեկատվություն Ծրագրի ընթացքի և ստացված արդյունքների մասին: Ենթաէջի հղումն է՝ https://anau.am/international-relations/excellence-center-for-vet-education-science/ Ֆեյսբուք սոցիալական կայքում բացվել է «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն»-ին նվիրված էջ, որտեղ լուսաբանվում են կենտրոնում իրականացված դասընթացները, հանդիպումները, քննարկումները, նոր ձեռքբերումները, ինչպես նաև տարածվում են անասնաբուժությանը վերաբերվող նյութեր և նորություններ: https://www.facebook.com/%D4%B1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A2%D5%B8%D6%82%D5%AA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%A1%D5%B6%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6- | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 187828856022271:<br>Գերազանցության կենտրոնի վերաբերյալ մշակվել է տեղեկատվական բուկլետ: | | |

Ծրագրի ղեկավար՝ U. Ծառուկյան